**Հավելված**
**2018թ. հունվարի 31-ին**
**կնքված N Ա-9.6.1/17 պայմանագրի**

*Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր*

**Ստեղծողի մոբիլ դպրոց**

**Ստեղծագործ անհատի կրթական պատվեր, անհատի օժտվածության զարգացման հանրակրթական բաց համակարգ**

**Հեղինակային կրթական ծրագիրը՝ ուսումնական օրացույցով, ուսումնական նախագծերով, անհատական թվային միջոցներով**

| *Իրականացվելիք միջոցառման* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *NN ը/կ* | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները | վերջնաժամ կետը | պահանջվող գումարը (դրամ) |
| 1 | Հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման, տարածման՝ մանկավարժական աշխատողների և սովորողների կարողությունների զարգացման բաց համակարգ | •Հեղինակային կրթական ծրագրերի լրամշակում, ուսումնական նախագծերի մշակում:<br>•1-12-րդ դասարանի սովորողի հեռավար ուսուցման ծրագրերի մշակում:<br>•Ուսումնական կյանքի ծիսականացումը՝ ընդհանուր պարապմունքը, հանրակրթական ստուգատեսը, ուսումնական ճամբարը, ուսումնական ծեսերի նախագծերը, | •2018-2019 ուսումնական տարվա օրացույցի մշակում:<br>2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլաններ՝ ուսումնական չորս շրջանների համար: Դրանց կազմակերպման պայմանների, կարգերի լրամշակում: 1-12-րդ դասարանում սովորողների, դասավանդողների անհատական պլաններ ըստ ուսումնական շրջանների: Նախագծային-ճամբարային ուսուցման հունվարյան, հունիսյան ուսումնական շրջանների | 2017-2018 ուսումնական տարվա օրացույց հավելվածներով՝ դպրոցների, մասնագիտական խմբերի, ուսումնական կենտրոնների օրացույցներ: Ամենամսյա օրացույցներ:<br>1-3-րդ, 4-5-րդ, 6-9-րդ, 10-12 դասարանների ուսումնական պլաններ՝ ուսումնական 2 շրջանի համար՝ սեպտեմբեր-դեկտեմբերի, փետրվար-մայիսի՝ նախագծային ուսուցման շաբաթներով: Ամբողջական նախագծային հունվարյան, հունիսյան դպրոց-ճամբարներ: Սովորողների, աշխատողների համար «Մուտք կրթահամալիր» ճամբարներ: Ուսումնական պլանի կազմակերպման կարգերի լրամշակում:<br>Շուրջտարյա կրթահամալիրային բաց նախագծերի, առարկայական, ակումբային, ստուգատեսային ուսումնական նախագծերի իրականացում: | 2018թ. օգոստոս Ամսվա նախորդ շաբաթ Հունվար, մայիս, օգոստոս, դեկտեմբեր Հունվար, հունիս<br><br>Հունվար, մարտ, հունիս, օգոստոս, հոկտեմբեր 2018թ. ընթացքում | 40 000 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ուսումնական բաց նախագծերը՝ կրթական տեխնոլոգիաներ:<br>•Մանկավարժական նորարարության, հեղինակային կրթական ծրագրի տարածման բաց համակարգի ստեղծում-գործարկում: Հեղինակային կրթական ծրագրի գործընկեր դպրոց-պարտեզների ցանցի ստեղծում: | բովանդակության-կազմակերպման մշակում: Հեղինակային կրթական ծրագրի սովորողի-աշխատողի ընդունելության բաց համակարգի լրամշակում: Ուսումնական տարաբնույթ, տարաժամկետ, տարատարիք նախագծերի մշակում, այդ թվում՝ նաև հանրակրթական ծրագրում թվային նոր գործիքների, նոր ծրագրերի յուրացման-ներդրման, բլոգային ուսուցման նախագծեր: Հանրակրթության ներառականության ապահովման հեղինակային միջավայրի մշակման նախագծեր: Գնահատման նոր գործիքներ և ցուցանիշներ. գնահատման համակարգում ինքնագնահատման | Հեռավար-առցանց ուսուցման բաց նախագծեր: Նախագծերում հանրակրթական այլ հաստատությունների սովորողների ներառում: Ինքնակրթության ուսումնական նախագծեր: Ուսումնական արձակուրդային նախագծեր՝ որպես լրացուցիչ կրթություն. ընթերցողական, նախագծերի-առաջադրանքների ուսումնական այլ փաթեթներ: Սովորողների, դասավանդողների ՏՀՏ հմտությունների անընդհատ զարգացում: Տեխնոլոգիական հմտությունների զարգացման նախագծեր: Դպրոցում, տանը, բակում միջավայրի խնամքն ու զարգացումը՝ ուսումնական հմտությունների զարգացում: Ուսումնական նախագծեր ագարակում. հնգամարտի, ազգային խաղերի, քայլք, վազք, լող, կենդանիների (ձի, ավանակ, շուն, ընտանի թռչուններ, ակվարիում, տերարիում), բույսերի խնամք՝ նաև որպես սովորողի ամբողջական ներառման ճանապարհ և թերապիա: Սովորողի անհատական ոճի ստեղծում ուսումնական նախագծերի միջոցով: «Ընտանիք-դպրոց՝ ամբողջական ներառական միասնական կրթական միջավայր» նախագիծ: Տնային ուսուցման ծրագրերի մշակում և իրականացում: | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամբողջական մոդելի ներդրում: «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» ուսումնական նախագծերի մշակում: Արտադրությամբ (գործուն) ուսուցման միջավայրի զարգացում, արտադրությամբ ուսուցման նախագծերի մշակում: Սովորողների, ուսուցիչների տեխնոլոգիական հմտությունների անընդհատ զարգացում: Գործուն հայրենագիտություն, քաղաքացիական կրթություն: Հայրենագիտական-բնապահպանական ճամփորդությունների կազմակերպման ուղեցույցների, երթուղիների մշակում: Սովորողի հնարավորություններին համապատասխան՝ մասնագիտական կարողությունների ձևավորում և զարգացում կրթահամալիրի | Կրթահամալիրում 2018-ին կառուցվող յոթ հրաշալիքների՝ որպես ներդրումային նախագծերի մշակում: Նյութական միջավայրի բարելավման նախագծերի ստեղծում կրթահամալիրի դիզայներական արվեստանոց-լաբորատորիայում: Նախագծերում թաղի բնակչության ներառում: Հայրենագիտական-էկոլոգիական ուսումնական այլ նախագծերի մշակում-իրականացում: 2013թ. ծնված երեխաների ուսուցման ծրագիր: Տեխնոլոգիական, երաժշտական, մարզական, այլ ուսումնական նախագծերով, ամենամսյա ստուգատեսներով ուսուցում: Ուսումնական կենտրոններում սովորողների նախասիրությունների զարգացման նախագծեր, լրացուցիչ կրթության ծրագրեր: Դրանցում հանրակրթական այլ հաստատությունների սովորողների ներգրավում: 9-րդ, 10-12-րդ դասարանցիների մասնագիտական կողմնորոշման բաց նախագծեր: Հայաստանի գործատուների հանրապետական միության, այլ գործընկերների հետ մշակվող, իրականացվող նախագծեր: Ուսումնական նախագծերով նոր գործընկերների ներառում: Հանրակրթական բոլոր աստիճաններում լող, հեծանիվ, վազք: 5-12-րդ դասարաններում նետաձգության, | 2018թ. ընթացքում<br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br>2018թ. ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ուսումնական կենտրոններում:<br>Ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության կարողությունների և հմտությունների ձևավորման և զարգացման հանրակրթական համակարգի զարգացում:<br>Տեխնոլոգիական հանրակրթության բաց կենտրոնի կազմակերպում:<br>Կրթահամալիրի մեդիագրադարանի զարգացում:<br><br>• Ուսուցման հեռավար ձև ընտրած սովորողների առաջադրանքների գրանցման, տեսադասերի | սուսերամարտի, հրաձգության, ձիավարության (եռամարտի, հնգամարտի) ուսումնական նախագծեր: Լողի, եռամարտի, հնգամարտի մրցաշարեր, հեծանվաերթեր, ռազմամարզական խաղեր:<br>Ուսումնական-հայրենագիտական, ազգագրական, էկոլոգիական, քաղաքացիական կրթության, կրթական փոխանակումների նախագծեր:<br>Ռազմամարզական, արշավախմբային-հայրենագիտական ճամբարներ, ճամփորդություններ:<br>Արտադրական ուսուցման և մասնագիտական կողմնորոշման ուսումնական ճամփորդությունների ուղեցույց: «Հարթակ Գեղարվեստում» շուրջտարյա մանկավարժական գործունեություն:<br>Մեդիագրադարանում հեղինակային կրթական ծրագրի ձայնադարանի, տեսադարանի, ցուցասրահի, խաղադարանի գործունեություն:<br>Ուսումնական նոր փաթեթների հրապարակում:<br>Ուսումնական նախագծի, ընդհանուր պարապմունքի, ուսումնական ճամբարի, հանրակրթական ստուգատեսի, ծեսի կազմակերպման ուղեցույցներ:<br>Տարբեր պատճառներով կրթահամալիրում առկա ուսուցման հնարավորություն չունեցող սովորողների՝ սահմանված կարգով ընդգրկում հեղինակային կրթական | 2018թ. ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպման կարգերի լրամշակում-կազմակերպում:<br>Հեռավար ուսուցման առարկայական-նախագծային փաթեթների մշակում:<br>•Ուսումնական ծիսական նախագծերի մշակում-իրականացում-տարածում:<br>Ավանդական ծեսերի յուրացում և հանրային կյանքում դրանց նորացում՝ որպես ուսումնական նախագծերի մշակման-իրականացման արդյունք:<br><br>•Մանկավարժական աշխատողների շուրջտարյա բաց դպրոցի ծրագրերի ստեղծում-կազմակերպում:<br>Ատեստավորվող ուսուցիչների վերապատրաստում:<br>Մանկավարժական նորարարության | ծրագրի հեռավար կազմակերպման մեջ:<br>Հեռավար ուսուցման մեջ ընդգրկված 1-3-րդ դասարանցիների ծնողների, 4-12-րդ դասարանցիների ՏՀՏ, բլոգավարության հմտությունների զարգացում:<br>Հեռավար ուսուցման առարկայական-նախագծային փաթեթներ, տեսադասեր, աուդիոդասեր մեդիագրադարանում:<br>Ուսումնական դպրոցական ամենօրյա, կրթահամալիրային ամենշաբաթյա ծեսեր՝ ընդհանուր պարապմունքների նախագծեր:<br>«Հոգևոր Հայաստան» բաց նախագծով «Ուսումնական Պատարագ Մուղնիի Աշճյանի անվան դպրոցի հետ» նախագծի իրականացում:<br>«Իսկական հարսանիք Ագարակում» ուսումնական նախագծեր:<br>«Ընտանիք-դպրոց՝ ամբողջական ներառական միասնական կրթական միջավայր» նախագիծ:<br>Ծիսական միջավայրում սովորողի, նրա ընտանիքի արժեքային համակարգի զարգացում, կրթական նոր համակեցության հաստատում:<br>Նախագծային ուսուցման, վերապատրաստման մոդուլների մշակում, իրականացում կրթահամալիրում և կրթահամալիրից դուրս:<br>Հեղինակային կրթական ծրագրի մեթոդական և կազմակերպման տեսադասեր:<br>Բլոգային ուսուցման մեթոդական ուղեցույցի լրացում: | Հունվար<br><br>Հունվար<br><br>2018թ. ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | տարածման «Բարեկամություն» ճամբարի, կրթահամալիր դիմող մասնագետների ամենամսյա վերապատրաստումների, հանրապետության, Արցախի, Վրաստանի հանրակրթական դպրոցների ուսուցիչների, ղեկավար աշխատողների վերապատրաստումների ծրագրերի մշակում-կազմակերպում: Գործընկեր դպրոցների ընտրության նախագծերի մշակում: | Մանկավարժական «Դպիր» ամսագրի 15 համար, այդ թվում՝ անգլերեն, ռուսերեն, վրացերեն:<br>Մանկավարժական աշխատողների շուրջտարյա դպրոց:<br>Գարնանային, հունիսյան, օգոստոսյան, աշնանային մանկավարժական ճամբարներ: Մանկավարժական նորարարության տարածման «Բարեկամություն ճամբարի շուրջտարյա գործունեություն Երևանում, ՀՀ մարզերում, Արցախում, Վրաստանում:<br>Կրթահամալիրի դիմող մասնագետների ամենամսյա վերապատրաստումներ:<br>Հանրակրթական դպրոցների ուսուցիչների, ղեկավար աշխատողների մասնակցություն կրթահամալիրի մանկավարժական դպրոցին:<br>Ուսումնական ծրագրերի-նախագծերի մշակման-կազմակերպման-տարածման մեջ օտար լեզուների գործածում:<br>«Իմացումի հրճվանք», մայրենիի, օտար լեզուների, հասարակագիտական լաբորատորիաների գործունեություն:<br>Կրթահամալիրում մենթոր (վերապատրաստող, խորհրդատու) ուսուցիչների լաբորատորիայի գործունեություն:<br>Հանրապետության, Արցախի, Վրաստանի դպրոցների խմբերի մասնակցություն կրթահամալիրում ստեղծագործական 2018թ. հավաքներին, ստուգատեսներին, ուսումնական նախագծերին: | Մարտ, հունիս, օգոստոս, հոկտեմբեր<br><br>2018թ. ընթացքում<br><br>2018թ. ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | •Հեղինակային կրթական ծրագրի զարգացման արդյունքում՝ կրթահամալիրի կանոնադրության փոփոխությունների առաջարկության մշակում: | «Ուսումնական Գյումրի», «Ուսումնական Արագածոտն» նախագծերով կրթական ծրագրի փոխանցման-տարածման, մեդիահմտությունների, նախագծային ուսուցման կազմակերպման հմտությունների փոխանցման «Սովորող-սովորեցնող» ենթանախագծեր. գործընկեր դպրոցների ցանցի ստեղծման համար ուսումնական նյութերի փաթեթի որոշում, գործընկերության մեկնարկ: Վայոց ձորի մարզում խոշորացված համայնքում հանրակրթության կազմակերպման աջակցություն:<br>«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունների առաջարկության ներկայացում ՀՀ ԿԳՆ: | Հոկտեմբեր | |
| 2 | Մանկավարժական նորարության փոխանակման, հեղինակային կրթական ծրագրի կրթական ծրագրի տարածման հեռավար-առկա դպրոց<br>Անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ | •Հանրակրթական առցանց ֆլեշմոբները՝ մանկավարժական տեխնոլոգիա, սովորողների օժտվածության զարգացման գործիք:<br>•Հանրակրթական բաց ստուգատեսներ, ճամբարներ: | •Ֆլեշմոբներ՝ ըստ ուսումնական օրացույցի: Սովորողի նախասիրության զարգացման, լրացուցիչ ուսուցման պարբերական հեռավար-առցանց ուսումնական աշխատանք:<br>•Ստուգատեսային բաց նախագծեր: Հեղինակային կրթական ծրագրերի | Մայրենիի, մաթեմատիկայի, օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն- վրացերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն), բնագիտության, պատմության, շախմատի ամենամյա ֆլեշմոբների առաջադրանքների ստեղծում: Ֆլեշմոբներում հանրապետության տարատարիք սովորողների ներառում:<br>Ամենամյա Բանգլադեշյան հունվարյան պլեներ՝ 10-րդ Հանրակրթական Դիջիթեք 2018՝ թվային միջոցները հանրակրթության արդյունավետ գործիքներ, 5-րդ | 2018թ. ընթացքում<br><br>Հունվար | 24 000 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | •Նախասիրություններ ի զարգացման բաց ակումբներ:<br>•Հեղինակային կրթական ծրագրի ներկայացման նախագծեր: | իրականացման արդյունքների ամփոփման և ծրագրի տարածման ամենամյա բաց ստուգատեսների, ստուգատեսային ճամբարների նախագծում:<br><br>•Շուրջտարյա բաց նախագծեր՝ «Գետը համայնքում», «Երևան 2800», «Երևանը | բնագիտատեխնիկական ստուգատեսներ,<br>5-րդ ձմեռային մարզական խաղեր:<br>Ամենամյա «Կարդում ենք» ստուգատես<br>«Ձոն» տեխնոլոգիական ստուգատես<br>14-րդ «Տիգրան Հայրապետյան 2018» հասարակագիտական-լրագրողական ստուգատես<br>8-րդ Հանրակրթական էկոտուր 2018<br>Ամենամյա Բանգլադեշյան հունիսյան պլեներ՝ 4-րդ Արտ-միջավայր 2018, 9-րդ կինո-ֆոտոփառատոն, 10-րդ երաժշտական փառատոն, 8-րդ «Անտիվիրուս Կոմիտաս», 8-րդ թատերական փառատոն, 7-րդ թարգմանչաց ստուգատես:<br>«Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» կազմակերպության աջակցությամբ հայ-բելգիական ամենամյա երկրորդ ճամբար:<br>Ազգագրական պատանեկան ամենամյա բաց ճամբարներ Գյումրիում, Թալինում:<br>5-րդ «Վահան Ասատրյան» մարզական ստուգատես<br>Ռազմամարզական ձմեռային, գարնանային, ամառային, աշնանային խաղեր, ճամբարներ:<br>Տարատարիք սովորողների ստուգատեսային ճամբարներ ՀՀ մարզերում, Արցախում, Վրաստանում:<br>Կրթական փոխանակումների նախագծերի իրականացում: Համատեղ բնապահպանական, մշակութային, ազգագրական, հայրենագիտական, | Փետրվար-մարտ<br>Մարտ<br><br>Ապրիլ-հունիս<br>Հունիս<br><br><br><br><br><br>Հուլիս<br><br><br><br><br>Հունիս, հոկտեմբեր<br>Հոկտեմբեր<br><br>Հունվար, մարտ, հունիս-օգոստոս, հոկտեմբեր<br><br>2018թ. ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի կազմակերպիչ», «Քաղաքը՝ բաց լաբորատորիա», «Ուսումնական Գյումրի», «Ուսումնական Արագածոտն»: Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» ծրագրի 10-րդ տարվա ուսումնական նախագծեր: | ընթերցողական, տեխնոլոգիական, պլեններների, այլ նախագծերի մշակում և իրականացում: Գյումրիում վրացերենի ուսուցման դասընթացի մեկնարկ կրթահամալիրի վրացախոսների ակումբի աջակցությամբ: Հայաստանում Վրաստանի դեսպանատան, Վրաստանի գործընկեր դպրոցների, պետական և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ հայ-վրացական ուսումնական նոր նախագծեր, դրանցում Սամցխե-Ջավախքի, Ծալկայի հայկական դպրոցների սովորողների-ուսուցիչների ներառում: Պատանեկան ամենամյա ազգագրական բաց ճամբարի համատեղ կազմակերպում: Համերգների, ցուցադրությունների, պլեններների, մրցաշարերի, ստեղծագործական բաց հավաքների կազմակերպման ակումբային նախագծեր: Հոգևոր, ժողովրդական երգերի տարածում ուսուցչական, պատանեկան, մանկական երգչախմբերի միջոցով: | Հունվար<br><br>2018թ. ընթացքում | |
| | | | • Պատանեկան, ուսուցչակյան ակումային գործունեություն | Ուսուցչանկան, պատանեկան, մանկական, երգչախմբերի, գործիքային խմբերի գործունեություն: Ուսումնական կայք, ենթակայքեր, կրթահամալիրային, դպրոցական, դասարանական, խմբային TV, ռադիո-ների, պատանեկան խմբագրությունների գործունեություն, կրթահամալիրի ուսումնական լրատվական կենտրոն: | Մայիս | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | •Ստեղծագործական բաց հավաքների համերգների, ցուցադրությունների կազմակերպում: | Հեղինակային կրթական ծրագրերի հեղինակների մայիսյան ամենամյա 13-րդ հավաք:<br>Հեղինակային կրթական ծրագրերի հեղինակների ամենամյա 13-րդ սեպտեմբերյան հավաք<br>«Գեղարվեստը կրթահամալիրում» ամենամյա ճամփորդական համերգ-ցուցադրություններ: | Սեպտեմբեր<br><br>2018թ. ընթացքում | |
| 3 | Աջակցություն կրթահամալիրում լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացմանը, ընդարձակմանը:<br>Աջակցություն կրթահամալիրի կրտսեր դպրոցների և քոլեջի կազմում գործող նախակրթարաններ ի պահպանությանը:<br>Հեղինակային նախադպրոցական կրթական ծրագրի տարածում | •Լրացուցիչ կրթության ծրագրերի, նախագծերի մշակում:<br>•Ծրագրի 2-5 տարեկանների խմբերի պահպանություն:<br>•Հեղինակային ծրագրով գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանցի ստեղծմանն ուղղված աշխատանքներ: | •Լրացուցիչ կրթության խմբերի գործունեություն, ծրագրի ընդարձակում:<br><br>•2-4 տարեկանների, 5 տարեկանների ուսուցման ծրագրերի լրամշակում, ուսումնական նյութերի ստեղծում:<br><br>•Նախադպրոցական հաստատությունների դաստիարակների, ղեկավարների վերապատրաստման 5- | Լրացուցիչ կրթության՝ տեխնիկական ստեղծագործության, կերպարվեստի-տեխնոլոգիական, մարզական, այլ խմբերի գործունեություն: Լրացուցիչ կրթության համերգներ, ցուցադրություններ, մրցումներ:<br>2-4 տարեկանների ինքնուրույնացման, տեխնոլոգիական, այդ թվում՝ մեդիա, հմտությունների ձևավորման, սոցիալականացման, միջավայրի և գիտելիքների ինքնուրույն յուրացման ուսումնական նախագծերի, նյութերի ուսումնական ժողովածուների ստեղծում:<br>«Պարտեզ ընտանիքում» նախագիծ:<br>2-5 տարեկանների դաստիարակների լաբորատորիա, ամենշաբաթյա պարապմունքներ:<br>«Բարեկամություն» ճամբարի շրջանակում հանրապետության, Արցախի, Վրաստանի նախադպրոցական հաստատությունների ղեկավար և մանկավարժական աշխատողների ամենամյա վերապատրաստումներ նախադպրոցական կրթության կազմակերպման նոր միջավայրում: | 2018թ. ընթացքում | 52 968 100 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | օրյա դասընթացների մշակում:<br><br>• «Ուսումնական Գյումրի», «Ուսումնական Արագածոտն» նախագծերով գործընկեր պարտեզների ընտրության նախագծերի մշակում: | Մանկական համայնքային ծեսեր Երևանում, Աշտարակում:<br>Նախադպրոցական հաստատությունների դաստիարակների, ղեկավարների մասնակցություն կրթահամալիրում 2018թ. կազմակերպվող ստեղծագործական հավաքներին, ստուգատեսներին, ուսումնական նախագծերին:<br>Հեղինակային նախադպրոցական կրթական ծրագրի նոր պատվիրատուների, շահառուների հետ ծրագրի տարածում: | | |
| Ընդամենը | | | | | | 116 968 100 |

Պատվիրատու՝

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 3
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005619
ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի
ղեկավար՝ _______________ Ն. Հարությունյան
*(ստորագրություն)*
*Կ.Տ.*

Կատարող՝

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ
Քաղաք Երևան, Րաֆֆի 57

ՀՎՀՀ 01804186
Հ/Հ 163218137665

Տնօրեն՝ _____________ Ա. Բլեյան
*(ստորագրություն)*
*Կ.Տ.*